ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2018 թվականի N29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ, ԳՈՐԻՍԻ, ՍԻՍԻԱՆԻ ԵՎ ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N52-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի Ն<728 հրամանագրի 1.18 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N25-Ն հրամանը՝

որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի տարածաշրջաններում տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների անհատական կազմերը՝ համաձայն N1, N2, N3, N4 հավելվածների և համակարգող խորհուրդների աշխատակարգը՝ համաձայն N5 հավելվածի:
2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզպետի 2016 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի տարածաշրջաններում տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրով ձևավորված համակարգող խորհուրդների անհատական կազմերը և աշխատակարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N174-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 52-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2018թ. մարտի 14

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ. մարտի 14-ի
N29 -Ա որոշման

Անհատական կազմ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրով ձևավորված համակարգող խորհրդի

1. Արմեն Բեգլարյան	-	Կապանի ՍԱՊԾ տարածքային բաժնի պետ
2. Գարիկ Գևորգյան	-	Կապանի ՋՏԿ գլխավոր մասնագետ
3. Արամ Հովհաննիսյան	-	Կապանի ՍԱՏԳ պետ
4. Անուշ Օրբելյան	-	Թիվ 1 ԲՍՓՀ
5. Անուշ Մեժլումյան	-	«Վորլդ վիժն» ԲՀԿ սոցիալական աշխատող
6. Սիլվարդ Խաչատրյան	-	Կապան քաղաքի Լեռնագործների 2/25 բն.բնակիչ
7. Գագիկ Մկրտչյան	-	«Ազատամարտ» կոմիտեի անդամ
8. Վահրամ Արզումանյան	-	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ
9. Մայա Միրզոյան	-	Կապան քաղաքի Բաղաբերդի 17/22 բն.բնակիչ
10. Ավետիք Համբարձումյան	-	Կապան քաղաքի Մ. Պապյան 1/11 բն. բնակիչ
11. Ռոբերտ Հարությունյան	-	Կապան քաղաքի Դավիթբեկի 5/25 բն. բնակիչ

Աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ. մարտի 14-ի
N29 -Ա որոշման

Անհատական կազմ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրով ձևավորված համակարգող խորհրդի

1. Նորայր Գրիգորյան	-	Գորիսի ՍԱՊԾ տարածքային բաժնի գլխավոր մասնագետ
2. Էմինե Ջավադյան	-	Գորիսի ՀՏԿ առաջատար մասնագետ
3. Նելլի Բաղրամյան	-	Գորիսի ՍԱՏԳ մասնագետ
4. Վլադիկ Հայրապետյան	-	Թիվ 2 ԲՍՓՀ փորձագետ
5. Ժիրայր Մարտիրոսյան	-	«Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ-ի նախագահ
6. Մենուա Հովսեփյան	-	Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ
7. Սարգիս Օչինյան	-	Հայ Ավետարանչական Ընկերության Սյունիքի մարզի պատասխանատու
8. Աշոտ Ասրյան	-	Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանականբաժնի պետ
9. Աննա Դանիելյան	-	«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ի սոցիալական աշխատող
10. Կարինե Մինասյան	-	Գորիս քաղաքի Սյունիքի 6/3 տան բնակիչ
11. Թագուհի Բոյան	-	Գորիս քաղաքի Վ.Մամիկոնյանի 24/1 տան բնակիչ

Աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ. մարտի 14-ի
N29 -Ա որոշման

Անհատական կազմ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրով ձևավորված համակարգող խորհրդի

1. Վահագն Նազարյան	-	Սիսիանի ՍԱՊԾ տարածքային բաժնի գլխավոր մասնագետ
2. Հակոբ Զաքարյան	-	Սիսիանի ՀՏԿ գլխավոր մասնագետ
3. ԿարենՄ անուչարյան	-	Սիսիանի ՍԱՏԳ գլխավոր մասնագետ
4. Արմենուհի Դովլաթյան	-	Թիվ 1 ԲՍՓՀ փորձագետ
5. Հախվերդյան Ասյա	-	Սիսիանի կանանց խորհրդի նախագահ
6. Սլավիկ Դադաշյան	-	Սիսիան քաղաքի Սիսական փողոցի 46/8 տան բնակիչ
7. Օֆելյա Դավթյան	-	«Սիսիանի կանանց ռեսուրս կենտրոն»-ի սոցիալական աշխատող
8. Լիաննա Հայրապետյան	-	Սիսիանի համայնքապետարանի գլխավոր մասնագետ
9. Գագիկ Խաչատրյան	-	Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ
10. Գայանե Մեսրոպյան	-	Սիսիան քաղաքի Որոտան փողոցի 4/17 տան բնակիչ
11. Վիլսոն Հարությունյան	-	Սիսիան քաղաքի Կամոյի փողոցի 28 տան բնակիչ

Աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ. մարտի 14-ի
N29 -Ա որոշման

Անհատական կազմ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրով ձևավորված համակարգող խորհրդի

1. Դավիթ Զաքարյան	-	Մեղրիի ՍԱՊԾ տարածքային բաժնի պետ
2. Մարինե Գևորգյան	-	Մեղրիի ՀՏԿ մասնագետ
3. Գոհար Զաքարյան	-	Մեղրիի ՍԱՏԳ մասնագետ
4. Արգինե Պողոսյան	-	Թիվ 1 ԲՍՓՀ Մեղրու տարածքային վիճակագիր
5. Սիրուն Սարգսյան	-	«Մեղրիի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
6. Աննա Մկրտչյան	-	Ոստիկանության Մեղրիի բաժնի ավագ տեսուչ
7. Սաքո Դավթյան	-	Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
8. Ալբերտ Բեկլարյան	-	Վարդանիձորի գյուղապետ
9. Ժաննա Ստեփանյան	-	Մեղրի քաղաքի Մ.Օհանջանյան 9 տան բնակիչ
10. Իսկուհի Վարդանյան	-	Մեղրիի համայնքապետարանի առաջատար բնակիչ
11. Միշա Հովհաննիսյան	-	Մեղրի քաղաքի Քարակերտ փողոցի 3 տան բնակիչ

Աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ. մարտի 14-ի
N29 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն ձևավորված համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգը:

2. Խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի որոշման մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Խորհրդի անդամներին:

3. Խորհրդի առաջին նիստը հրավիրում և վարում է տարածքային մարմնի ղեկավարը:

4. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կազմը հաստատվելուց հետո հրավիրված առաջին նիստում, Խորհրդի անդամների թվից՝ բաց քվեարկությամբ, Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով, բայց ոչ ավելի խորհրդի տվյալ անհատական կազմով գործելու ժամկետի ավարտը:

5. Խորհրդի նախագահի ժամկետից շուտ վերընտրություն հնարավոր է՝

1) Խորհրդի նախագահի հրաժարականի դեպքում.

2) Խորհրդի անդամների երկու երրորդի կողմից Խորհրդի նախագահի հրաժարականի գրավոր պահանջի դեպքում:

6. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

7. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության օրենքներին, Համաձայնագրին, սույն աշխատակարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

8. Խորհրդի նիստերի անցկացման և (կամ) աշխատանքների իրականացման վայրը տարածքային մարմնի գտնվելու վայրն է:

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Իր իրավասության շրջանակներում Խորհուրդը՝

1) քննարկում և ուսումնասիրում է սոցիալական աջակցություն հայցող անձանց ներկայացրած դիմումները, փաստաթղթերը և կողմնորոշում նրանց սոցիալական աջակցություն ստանալու հարցում.

2) իր անդամների (նրանց ներկայացրած կազմակերպությունների) ուժերով կազմակերպում է տնային այցելություն և տալիս առաջարկություն՝ սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում և կարգով.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման NN 3, 8 և 12, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման N 2 հավելվածներով Խորհրդին վերապահված լիազորությունները.

4) ստեղծում է համապատասխան աշխատանքային խմբեր՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության դեպքում.

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Համաձայնագրով սահմանված այլ լիազորություններ:

III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Խորհուրդն աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը գումարվում են նաև Խորհրդի նախագահի կամ տարածքային մարմնի ղեկավարի նախաձեռնությամբ:

11. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

12. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Խորհրդի նախագահը, Խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ Խորհրդի նախագահի հանձնարարականով՝ Խորհրդի անդամներից մեկը (իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային մարմնի ղեկավարը):

13. Խորհրդի նիստի անցկացման վայրը տարածքային մարմնի գտնվելու վայրն է: Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կարող են գումարվել նաև արտագնա նիստեր: Խորհրդի նախագահը որոշում է Խորհրդի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

14. Խորհրդի նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել շահագրգիռ անձինք կամ նրանց օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև Համաձայնագրի այլ կողմերի, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

15. Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում և վարում է Խորհրդի նիստերը,

2) ստորագրում է Խորհրդի որոշումները, այլ փաստաթղթերը (քաղվածքներ, արձանագրություններ, առաջարկություններ և այլն),

3) իրականացնում է սույն աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ:

16. Տարածքային մարմինն ապահովում է Խորհրդի աշխատանքների կազմակերպական և գործավարական սպասարկումը՝

1) կազմում է Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը Խորհրդի անդամների և իր, ինչպես նաև Համաձայնագրին միացած այլ կողմերի ներկայացրած առաջարկությունների հիման վրա.

2) նիստի օրակարգի նախագիծը Խորհրդի անդամներին է ուղարկվում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ.

3) արձանագրում է նիստը և արձանագրությունը ներկայացնում ստորագրման Խորհրդի նիստի բոլոր մասնակիցներին՝ ավարտից հետո մեկօրյա ժամկետում:

17. Խորհրդի նիստի օրակարգում նշվում են՝

1) Խորհրդի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը,

2) քննարկվող յուրաքանչյուր հարցը, զեկուցողի անունը, ազգանունը,

3) Խորհրդի նիստին հրավիրված անձանց անունները, ազգանունները, զբաղեցրած պաշտոնները (իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումները):

18. Խորհրդի նիստն անցկացվում է հաստատված օրակարգով:

19. Խորհուրդը նիստերի ընթացքում որոշումները կայացնում է բաց քվեարկության միջոցով, նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը կայացվում է հոգուտ սոցիալական աջակցություն հայցող անձի:

20. Որոշմանը դեմ քվեարկած Խորհրդի անդամը կարող է հատուկ կարծիք ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) և (կամ) տարածքային մարմնին և (կամ) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

21. Տարածքային մարմնի համապատասխան աշխատողը Խորհրդի նիստում կայացրած որոշումները, ինչպես նաև այլ փաստաթղթերը (արձանագրություններ, քաղվածքներ, կարծիքներ և այլն) դրանք ստորագրվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում (ուղարկում) է տարածքային մարմնի ղեկավարին և (կամ) այլ համապատասխան կազմակերպություններին ու պաշտոնատար անձանց:

22. Խորհրդի կայացրած որոշումները տարածքային մարմնի կողմից չկատարման (առաջարկությունները չբավարարվելու) դեպքում Խորհուրդը կարող է այդ մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին և (կամ) նախարարությանը:

23. Խորհուրդն իրականացրած գործունեության մասին կիսամյակը մեկ անգամ ամփոփ տեղեկություն

է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 38 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգով նախատեսված մարզային զարգացման հանձնաժողովին, ինչպես նաև նախարարությանը:

Աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյան